օրուան, ընթացիկ քաղաքականութեան խընդիր: Այսպէս դատել նշանակում է հաշուի չառնել ժամանակի եւ տարածութեան ազդակները, որոնց ճշգրիտ ըմբռնողութիւնը հիմն է ամէն մի իրապաշտ քաղաքականութեան:

Մոռնալու չէ երբեք, որ երբ 1919-ին հրապարակ հանուեց Միացեալ Հայաստանի պահանջը, մենք առարկայօրէն դտնուում էինք մեր այդ իտէալի իրականացման նախօրէին: Ազգային եւ միջազգային բոլոր ազդակները այն ժամանակ վճռապէս խօսում էին նրա օգտին:

Այնուհետեւ փոխուեցան նոյն այդ ազդակները, բնականաբար պիտի փոխուէին եւ փոխուեցան էլ մեր ըմբռնողութիւնը Միացեալ Հայաստանի սահմանների, ինչպէս նաեւ նրա իրականացումը հետապնդող միջոցների եւ տեւողութեան մասին:

Միացեալ Հայաստան գաղափարի էութիւնը դրանով չվերացաւ հարկաւ, ոչ էլ աղճատուեց, այլ յարմարուեց փոփոխուած պայմաններին, որոնք մեր կամքից դուրս են, որոնց սակայն հաշուի առնել չէ կարող նոյն այդ կամքը: Միացեալ Հայաստանի ամբողջական գաղափարը վաղը կարող է դոհանալ Կովկասեան Հայաստանի յափշտակուած դաւառների վերստացումով, նա կարող է յետագային հետապնդել Արեւմտեան Հայաստանի թէկուզ մէկ-երկու դաւառի ազատագրումը եւ դարձեալ գոհանալ ու ամբողջացուած սեպուիլ, բոլոր պարագաներում այդ ամէնը տեղի ունենալ կարող է Արդի Հայաստանի ընդարձակումով:

Ուրիշ խօսքով՝ Միացեալ Հայաստանի գաղափարը միայն եւ միայն ժամանակակից Հայաստանի սահմանների ընդարձակման խընդիր է — այն ուղղութեամբ եւ այն չափով, որ օգտաշահ է եւ անհրաժեշտ, հայութեան ցրիւ խոշոր հատուածները համախմբելու հայրենի հողերի վրայ:

Ահա նաեւ այդ տեսակէտից Միացեալ Հայաստանի գաղափարը հակադրւում է քաղաքական այն ըմբռնողութեան, լինի նա համայնավարների թէ այլոց կողմից պաշտպանուած, համաձայն որի՝ սին պատրանք է Միացեալ Հայաստանը ինքնին, թէ՝ Հայկական Հարցը լուծուած է արմատից եւ առյաւէտ, եւ թէ միանգամ ընդմիշտ գծուած են Հայաստանի սահմանները, նրանցից դուրս աւելի կամ ուրիշ պահանջ չունի հայ ժողովուրդը:

III

Ինքնին առանձին հարց է, ի հարկէ, թէ Միացեալ Հայաստանի — աւելի լայն կամ անձուկ սահմաններով — իրականացումը կա՞րճ թէ երկար տեւողութեան խնդիր է, ապրո՞ղ թէ ապագայ սերունդներին է վերապահուած նա:

Այդ հարցի այս կամ այն պատասխանը կախում ունի միջազգային ոյժերի դասաւորումներից, բայց որ գլխաւորն է՝ մեր սեփական ոյժերի հաւաքումից եւ զօրացումից:

Վերջին 10-12 տարիների ընթացքում մենք այնքան թուլացանք ֆիզիքապէս, այնչափ նօսրացաւ մեր համրանքը, այն աստիճան սեղմուեցաւ ազգագրական Հայաստանը — իսկ դրանք են ամէն մի ազգային քաղաքականութեան առաջ մղիչ գերազանց ազդակները — որ անկարող ենք հաշուի չառնել այդ ամէնը եւ ըստ այնմ էլ չափել ու ձեւել մեր քաղաքական վարքագիծը՝ առաջիկայ ժամանակաշրջանի համար:

Իրականութեան առջեւ աչք չգոցելը, որչափ եւ դառն լինի նա, քաղաքական գործիչի եւ կազմակերպութեան է՛ն առաջին պարտականութիւնն է: Իսկ այդ իրականութիւնը ասում է, առանց յուսաբեկ ու թեւաթափ անելու մեզ, թէ հայ ազգի մեծագոյն դահիճները ըստ էութեան անսխալ էին գծել իրենց նշանակէտը՝ հայ ժողովուրդի մի հատուածի անճիտումով նրա Դատի իրականացումն էլ երկարաձգել յիսուն տարով: Երկարաձգել, բայց ոչ թաղել, որ վեր է մեր ցեղի բոլոր դահիճների համար իսկ՝ միասին առած:

Շարունակենք: Այսպիսով՝ Միացեալ Հայաստանի ելակէտը Անդրկովկասում որոնելու է: Ներկայ Հայաստանից թէեւ դուրս, բայց նրան անմիջապէս կից դտնուող եւ ազգագրօրէն ու աշխարհագրա-տնտեսօրէն — ուստի եւ իրականօրէն — ոչ նուազ հայկական բռնադրաւուած շրջանների վերստին կցումը մեր երկրին՝ դիտելու է որպէս առաջին հանգրը-